



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՅԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

201 Ք. Տարրի 7 - ի թիվ 5/1

ԿՈՏԱՅՔԻ ՍԱՐՁՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԿՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Կոտայքի մարզպետարանին պետական բյուջեից հատկացված միջոցների
օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական
սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության
ալյույունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀԱՅԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ՉԱԲԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԺ խորհրդի
2012թ. մարտի 7-ի թիվ 5/1 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

Կոտայքի մարզպետարանին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011թ. գործունեության տարեկան ծրագրի 4.4 կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2011թ. սեպտեմբերի 28-ի թիվ 25/1 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Կոտայքի մարզպետարանին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման ուսումնասիրությունն է:

Վերահսկողության առարկան՝ Կոտայքի մարզպետարանին պետական բյուջեից հատկացված միջոցները, բյուջետային մուտքերը, մարզպետարանի կողմից կառավարվող պետական սեփականությունը, այդ թվում՝ հողեր, գույքային միավորներ և պետական բաժնեմասեր, ինչպես նաև մարզպետարանի իրավասությունների շրջանակներում կատարված գործողություններն ու գործարքները:

Վերահսկողության օբյեկտները՝ Կոտայքի մարզպետարան, ներառյալ՝ 13 կառուցվածքային և 4 առանձնացված ստորաբաժանումներ, պետական ոչ առևտրային կազմակերպություններ, բաժնետիրական ընկերություններ (հիմնադիր՝ ՀՀ Կոտայքի մարզպետարան):

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 03.10.2011-30.12.2011թթ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2009-2010թթ. և 2011թ. 9 ամիս:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողությունն իրականացվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևով, ինչպես նաև կիրառվել են ֆինանսական, արդյունավետության (կատարողական) և համապատասխանության տեսակները: Կիրառվել է ընտրանքային մեթոդի ոչ վիճակագրական եղանակ: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են դիտարկման և ստուգման արդյունքում ստացված տվյալները:

Վերահսկողության արդյունքները՝

1. Հիմնանորոգման և շինարարական աշխատանքներ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ծրագրի իրականացման համար ծախսերի ընդհանուր գումարը վերահսկողության ժամանակաշրջանի համար կազմել է 1,956,567.6 հազ. դրամ: Ընտրանքային կարգով ստուգվել է թվով 10 օբյեկտ, ստուգված գումարը՝ 400,378.9 հազ. դրամ:

Ստուգման արդյունքում արձանագրվել է 22,496.63 հազ. դրամի խախտում: Այդ թվում՝

- ծավալային հավելագրում՝ 4,431.93 հազ. դրամ
- անորակ աշխատանքներ՝ 18,064.70 հազ. դրամ

Ընտրանքային կարգով ստուգման ենթարկված օբյեկտների գերակշիռ մասում բազմիցս կրկնվում են հետևյալ բնութագրական խախտումները.

Շինարարական նորմերի ընդունման մասով՝

- Շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով:
- Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով:

Բացակայում են օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը:

Վերը նշված խախտումներից բացի, ստուգված որոշ օբյեկտներում հայտնաբերվել են նաև հետևյալ բնույթի խախտումներ.

- Արովյան քաղաքի թիվ 10 դպրոցի շենքի հիմնանորոգման նախագիծը կատարված է թերի կազմով և բովանդակությամբ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով համաձայնեցված չեն:

Տանիքի փայտե կոնստրուկցիաների գծագրերը կատարված են թերի:

Տանիքը իրականացված է նախագծային շեղումներով, որոշ հատվածներում՝ նախկինում օգտագործված փայտանյութից:

Անոթակ են կատարվել տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրման, ալյումինա - պոլիկարբոնատե միջնորմերի պատրաստման աշխատանքները:

Երկաթ-բետոնյա գոտու գործիքային ստուգումներից պարզվել է, որ տեղում բետոնի մակնիշը ավելի ցածր է պահանջվող նախագծային մակնիշից:

- Չարենցավանի թիվ 1 դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերում պահպանված չեն պետական ստանդարտով սահմանված շինարարական գծագրերի մշակման միասնական կանոնները և նորմերը:

Անոթակ են կատարվել ասֆալտբետոնե ծածկույթի կառուցման, պատերի առաստաղների լատեքսային և յուղաներկով ներկման, պատերի գաջե սվաղի աշխատանքները:

- Արգաքանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերում պահպանված չեն պետական ստանդարտով սահմանված շինարարական գծագրերի մշակման միասնական կանոնները և նորմերը:

Անոթակ են կատարվել խողովակների և մարտկոցների յուղաներկման, առաստաղների և պատերի լատեքսային ներկման, վինիլային հատակների իրականացման, տանիքի ծպեղների և կանգնակների ամրացման, ջրհորդանների տեղադրման, մետախե հատակների կառուցման, առանձին տեղերում պատերի, առաստաղների գաջե սվաղի աշխատանքները:

Պատշաճ որակով են կատարվել Գողթի միջնակարգ դպրոցի և Գառնիի մանկապարտեզի շենքերի հիմնանորոգման աշխատանքները:

Շինարարական օբյեկտներում հիմնականում տեխնիկական և հեղինակային հսկողությունը չի իրականացվել սահմանված կարգին համապատասխան՝ խախտելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.98թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին» թիվ 44 հրահանգի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.98թ. «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման մասին» թիվ 143 հրահանգի պահանջները:

Նախագծահետազոտական աշխատանքների իրականացման վերաբերյալ

Ստուգված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերը հիմնականում կատարվել են հետևյալ բնութագրական խախտումներով.

- Նախագծերում չեն պահպանված պետական ստանդարտով սահմանված շինարարական գծագրերի մշակման միասնական կանոնները և նորմերը:
- Հաճախակի հանդիպում են նախագծեր՝ առանց անհրաժեշտ չափագծերի, հանգույցների մանրամասների և այլն:

Որոշ դեպքերում՝ գոյություն ունեցող չափագրություններում, բացակայում են ճակատների, կտրվածքների և հանգույցների մանրամասների գծագրերը:

- Նախագծերը մեծամասամբ կատարվել են ոչ պատշաճ գրաֆիկական որակով:
- Նախագծային առաջադրանքների բացակայության, ոչ բավարար ու անորակ կատարված տեխնիկական հետազոտության և թերի մշակված նախագծերի պատճառով մի շարք դեպքերում առաջացել է փոփոխված ծավալների համադրման անհրաժեշտություն:

2. 50 և ավելի տոկոս պետական մասնակցությամբ ընկերություններում պետական բաժնեմասի կառավարման մասին

Կոտայքի մարզի 50 և ավելի % պետական բաժնեմաս ունեցող առողջապահական ընկերությունները 40-ն են, որոնցից 32-ը՝ գյուղական ամբուլատորիաներ և ԱԱՊԿ-ներ, 3 պոլիկլինիկաներ, 1 արյան բանկ, 1 ծննդատուն և 3 բժշկական կենտրոն:

Վերահսկողության ընթացքում կատարված դիտարկումների արդյունքում ընտրանքային կարգով նախատեսվել և ստուգման փուլում ստուգվել են թվով 2 ընկերություններ՝

«Աբովյանի բժշկական կենտրոն» և «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ները:

Ստուգման արդյունքում արձանագրված խախտումներ

- «Աբովյանի բժշկական կենտրոն» և «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների կողմից կատարվել է ընկերությունների գործունեության հետ չկապված և հիմնական գործունեությանը չառնչվող 1,316.2 հազ. դրամի ոչ նպատակային ծախս:
- «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բժշկական տեղեկանքներից 195.0 հազ. դրամի 39 տեղեկանք հաշվառվել, սակայն չեն վճարվել ընկերության դրամարկղ, որը ենթակա է վերականգնման:
- ՀՀ կառավարության 22.06.2006թ-ի «50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների կողմից իրականացվող որոշ ծախսերի առավելագույն թույլատրելի սահմանաչափերը սահմանելու մասին» թիվ 1238 որոշման պահանջները խախտելու հետևանքով գոյացել է 1,565.6 հազ. դրամ լրացուցիչ շահաբաժին, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետ բյուջե:

Այսպիսով, 2 բուժ. ընկերությունների վերահսկողության ընթացքում արձանագրվել է 3,076.8 հազ. դրամի խախտում, որից 1,565.6 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետբյուջե, իսկ 195.0 հազ. դրամը՝ ընկերություններին:

3. Կոտայքի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ

Վերահսկողության ընթացքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

- Թվով 2 ՊՈԱԿ-ներում /«Հրազդանի թիվ 11 մ/դ», «Եղվարդի թիվ 3 հիմն. Դպրոց»/ հայտնաբերվել է սովորողների տվյալ ուսումնական հաստատություն ընդունելության և ուսումնական հաստատություններ փոխադրման ժամկետների անհամապատասխանություն, որի հետևանքով կատարվել են 2 աշակերտների կրկնակի ֆինանսավորում՝ 70.5 հազ. դրամի չափով, որը ենթակա է վերականգնման:

- Թվով 5 ՊՈԱԿ-ներում /«Հրազդանի թիվ 8 հիմն. դպրոց», «Աբովյանի հատուկ /օժանդակ/ դպրոց», «Հրազդանի թիվ 11 մ/դ», «Լեոնանիստի մ/դ», «Հրազդանի թիվ 14 հիմն. դպրոց»/ կոմպլեկտավորվել է փաստացի աշակերտների թվից ավելի 16 աշակերտ՝ որի հետևանքով ավելի է ֆինանսավորվել 1,530.4 հազ. դրամի չափով: 1,108.7 հազ. դրամը վերականգնվել է մարզպետարանի կողմից, իսկ 421.7 հազ. դրամը ենթակա է վերականգման պետություն:
- Թվով 5 ՊՈԱԿ-ներում / «Նոր Գեղի թիվ 2 հիմն. Դպրոց», «Աբովյանի թիվ 8 հիմն. Դպրոց», «Աբովյանի թիվ 2 մ/դ», «Հրազդանի թիվ 11 մ/դ», «Լեոնանիստի մ/դ»/ 11 աշակերտ մնացել են համակազմում, կոմպլեկտավորվել են և ազատվել են դպրոցից տարբեր ամսաթվերով (սեպտեմբերի 5-ից մինչև հունվար ընկած ժամանակահատվածում), սակայն դպրոց չեն հաճախել սեպտեմբերի 1-ից: Արդյունքում, նշված ՊՈԱԿ-ները ավելի են ֆինանսավորվել 401.9 հազ. դրամի չափով, որից 100.5 հազ. դրամը վերականգնվել է մարզպետարանի կողմից. իսկ 301,4 հազ. դրամը ենթակա է վերականգման:
- Ուսումնասիրված բոլոր ՊՈԱԿ-ները ունեն լաբորանտի հաստիք, չնայած ոչ բոլորն են ապահովված համապատասխան լաբորատոր սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով: 3 դպրոցներում /«Զարենցավանի թիվ 3 հիմն. դպրոց», «Լեոնանիստի մ/դ», «Հրազդանի թիվ 14 հիմն. դպրոց»/ լաբորանտները չունեն համապատասխան մասնագիտական կրթություն:
- Թվով 2 ՊՈԱԿ-ներում /«Հրազդանի թիվ 8 հիմն. Դպրոց», «Եղվարդի թիվ 2 հիմն. դպրոց»/ առկա են անհամատեղելի հաստիքներ՝ լաբորանտին, գրադարանավարին, օպերատորին իրենց դրույքներից բացի հատկացվել են նաև 0.5 դրույք հավաքարարի հաստիք:
- Ուսումնասիրված դպրոցներում 2009-2010 թթ. գնումները կատարվել են առանց համապատասխան գնման գործընթաց իրականացնելու: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ Կառավարության 2008 թվականի հունիսի

5-ի թիվ 853-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերի պահանջները:

- «Նոր Գեղի թիվ 2 հիմն. դպրոց»-ը լիցենզավորվել է ԿԳ նախարարության լիցենզավորման համապատասխան հանձնաժողովի կողմից, սակայն նշված դպրոցը ունի խիստ վերանորոգման կարիք և չի համապատասխանում «Լիցենզիայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 9-ի թիվ 808-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանով սահմանված՝ Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ թիվ 2, III. 3-2... պահանջներին:
- Թվով 2 ՊՈԱԿ-ներում /«Հրազդանի թիվ 11 մ/դ», «Եղվարդի թիվ 3 հիմն. Դպրոց», «Լեռնանիստի մ/դ»/ գանձապահի պարտականությունները կատարվել են տնօրենների կողմից: Խախտվել է «Դրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3 մասի պահանջները:
- «Հրազդանի թիվ 11 հիմն. դպրոց և հատուկ կրթության ստորաբաժանում» ՊՈԱԿ-ում կատարվել է օրինակելի ուսումնական պլանից շեղում 0,5 դասաժամ՝ 9-րդ դասարանի ռուսաց լեզվի նախատեսված շաբաթական 3 ժամի փոխարեն հատկացվել է 2,5 դասաժամ:
- Ուսումնասիրված ՊՈԱԿ-ներում հայտնաբերված ֆինանսական խախտումները կազմում են 2002.8 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման պետբյուջե 793.6 հազ. դրամը:

Այսպիսով՝ 12 ՊՈԱԿ-ների վերահսկողության ընթացքում արձանագրվել է 2,002.8 հազ. դրամի խախտում, որից ենթակա է վերականգնման պետբյուջե 793.6 հազ. դրամը:

4. ՀՀ Կոտայքի մարզի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների /այսուհետև՝ ՄՏՏԳ/ կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Կոտայքի մարզում գործում են սոցիալական ծառայությունների չորս տարածքային գործակալություններ՝ Հրազդանի, Արովյանի, Չարենցավանի և Եղվարդի:

Մարզի գործակալությունները սպասարկում են 7 քաղաքային և 60 գյուղական համայնքներ:

2009 թվականի ընթացքում մարզի 4 ՄՏՏԳ-ներում ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների միջին թիվը կազմել է 8899 ընտանիք:

2010 թվականի ընթացքում մարզի 4 ՄՏՏԳ-ներում ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների միջին թիվը կազմել է 8333 ընտանիք:

Վերահսկողության ընթացքում հայտնաբերվեցին շուրջ 189 ընտանեկան նպաստի տրամադրման գործերում խախտումներ, որոնցից 82 ընտանիքներ կորցնում են նպաստի իրավունքը: Դրա արդյունքում պետական բյուջեին պատճառված վնասի չափը կազմում է 21,501.0 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման 11,608.0 հազ. դրամ, այդ թվում՝ Հրազդանում՝ 7,560.0/5,997.5 հազ.դրամ, Արովյանում՝ 5,964.0/2,004.0 հազ.դրամ, Չարենցավանում՝ 2,476.5/1,263.5 հազ.դրամ և Եղվարդում-5,500.5/2,343.5 հազ.դրամ:

5. ՀՀ Կոտայքի մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող, մարզպետարանի ենթակայության պետական սեփականության հողերի տրամադրման և օգտագործման մասին

Հայաստանի Հանրապետության «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2009թ. մայիսի 19-ին կատարված փոփոխության համաձայն համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող 48690.9 հա տարբեր նպատակային նշանակության հողամասերը (ներառյալ նաև կառավարման լիազորությամբ համայնքներին տրված 2-րդ և այլ հատվածների հողամասերը) ընդգրկվեցին մարզի թվով 42 համայնքների վարչական սահմաններում, որից հետո նախկինում կնքված վարձակալական

բոլոր 54 պայմանագրերը մարզպետարանը տրամադրել է համապատասխան համայնքների ղեկավարներին՝ ստացականների միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ նշված փաստաթղթերի փոխանցումը համայնքներին կատարվել է հապճեպ և որոշակի թերություններով: Մասնավորապես՝ նախօրոք չեն ճշգրտվել քարտեզային / գրաֆիկական/ նյութերը, փոխանցված հատակագծերում բացակայում են հողամասերի շրջադարձային կոորդինատները, որի պատճառով առանձին տեղերում կան սահմանային խնդիրներ, նաև՝ վեճեր:

2009-2011 թվականների համար հաշվարկված վարձավճարներից չի գանձվել միայն Հ. Հովհաննիսյանի կողմից վարձակալված 130 հա արոտի վարձավճարը, որը՝ տույժերի հետ միասին կազմում է 1,158.5 հազ. դրամ: Նշված ապառքը գանձելու նպատակով մարզպետը համապատասխան հարցով դիմել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որի 31.07.2009թ. կդ 0112/02/09 դատավճռով բավարարվել է հայցադիմումի պահանջը և այն գտնվում է հարկադիր կատարման վարույթում:

6. Պետական սեփականության հողերի օտարումներ

2009-2011թթ. Ընթացքում պետական սեփականության հողեր են օտարվել Ծաղկաձոր և Արտավազ համայնքներում:

1. Ծաղկաձոր

ՀՀ կառավարության 21.01.2010թ. թիվ 74-Ն որոշմամբ ամերիկյան «Նյու հորիզոն գրուպ ինկ» ընկերությանը սահմանված կարգով ուղղակի վաճառքով, կադաստրային ամբողջ արժեքով օտարվել է անշարժ գույքով զբաղեցված և շենք-շինություններով չծանրաբեռնված 7,61 հա հողամասը 21 լոտով՝ 344,385.0 հազ. դրամ արժեքով: Գումարը ամբողջությամբ վճարվել է ՀՀ պետական բյուջե: Գույքի նկատմամբ պետական գրանցումը իրականացվել է 2010թ. Մայիսի 21-ին:

2. Արտավազ

ՀՀ կառավարության 2010թ. Փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արտավազի գյուղական համայնքի վարչական սանմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 241-Ն որոշմամբ նախատեսվել է Արտավազ համայնքի վարչական տարածքում կառուցել հանքային ջրերի արդյունահանման և շշալցման գործարան: Որոշման 2-րդ կետով նշված տարածքների ձեռք բերող է ճանաչվել «Էյ ընդ Էմ ռեյր» ՍՊԸ-ն: Գործարանի սանիտարական գոտու ստեղծման,

կառուցման ներդրումային առաջարկի իրականացման անհրաժեշտությունից ելնելով Արտավազի համայնքի ավագանին 12.02.2011թ. թիվ 03 որոշմամբ դիմել է ՀՀ Կոտայքի մարզպետին՝ Արտավազի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն համարվող հողերից 520 հա արոտ օտարելու նպատակով ՀՀ պետական լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու խնդրանքով:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը իր 24.01.2011թ. թիվ 01/16/300-11 եզրակացությամբ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 14.01.2010թ. թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և հաշվի առնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարծիքը ու հիմնավորումները՝ օտարման վերաբերյալ տվել է դրական եզրակացություն:

Հաշվի առնելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ համայնքի ավագանին իր որոշմամբ նշված 520 հա արոտի օտարման մեկնարկային գին է սահմանել դրա կադաստրային արժեքի 30 %-ը: Հողամասը օտարվել է 26 լոտով, յուրաքանչյուր լոտի չափը կազմել է 20,0 հա, ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 53,502.8 հազ. դրամ: Գույքի նկատմամբ պետական գրանցումը կատարվել է 2011թ. մարտի 18-ին:

7. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների վերաբերյալ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն համայնքներում հողամասերի օտարումից գոյացած միջոցները առաջնահերթության կարգով պետք է ուղղել հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմմանը: ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը սեփականության կամ օգտագործման իրավունքով են տրամադրվում հողերի գոտիավորման և օգտագործման սխեմային համապատասխան:

Ելնելով վերոնշյալ իրավական ակտերի պահանջներից՝ առաջարկվել է հողամասի օտարում կատարած համայնքների ղեկավարներին օտարումից գոյացած միջոցներով պատվիրել հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ: ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 2-ի թիվ 625-Ն որոշման պահանջներին համապատասխան մարզի թվով 17 համայնքների կողմից 2005-2009թթ. ընթացքում պատվիրվել է հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ:

2010-2011թթ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից հաստատվել են թվով 7 համայնքների սխեմաներ / Բալահովիտ, Նոր Գյուղ, Վ. Պտղնի, Քասախ, Նոր Արտամետ, Արամուս, Ակունք/: Ներկայումս գրեթե ամբողջությամբ ավարտված են Պտղնի, Գետարգել, Արագյուղ և Զորավան համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները, իսկ թվով 6

համայնքների սխեմաներ վերակազմակերպվել են որպես գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծեր:

Անհրաժեշտ է նշել, որ յուրաքանչյուր սխեմայի մախագծման աշխատանքները կազմում են 3,6-ից 7 մլն դրամ: Նշված սխեմաները կազմվել են բացառապես համայնքային բյուջեների հաշվին:

Ընդհանուր առմամբ, նշված սխեմաների կազմման աշխատանքների համար վերը նշված համայնքների ֆոնդային բյուջեներից ծախսվել է շուրջ 72 մլն. ՀՀ դրամ, որից, այս պահի դրությամբ, ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 7 համայնքների սխեմաներ, որի համար ծախսվել է շուրջ 42 մլն. ՀՀ դրամ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

- Քաղաքաշինության բնագավառում արձանագրվել է 22,496.6 հազ. դրամի խախտում՝ 4,431.9 հազ. դրամ ծավալային հավելագրում, 18.064.70 հազ. դրամ՝ անորակ աշխատանքներ:
- Շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով:
- Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով:
- Բացակայում են օգտագործված շինարարական նյութերի որակի հավաստագրերը:
- Շինարարական օբյեկտներում սահմանված կարգով պահանջվող տեխնիկական և հեղինակային հսկողությունն իրականացվել է թերի:
- «Արովյանի բժշկական կենտրոն» և «Չարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-երի վերահսկողության ընթացքում արձանագրվել է 3,076.8 հազ. դրամի խախտում, որից 1,565.6 հազ. դրամը ենթակա է վերականգնման պետբյուջե, իսկ 195.0 հազ. դրամը՝ ընկերություններին:
- 12 ՊՈԱԿ-ների վերահսկողության ընթացքում արձանագրվել է 2,002.8 հազ. դրամի խախտում, որից ենթակա է վերականգնման պետբյուջե 793.6 հազ. դրամը:

- Մարզպետարանի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից խախտումներով վճարված նպաստը կազմել է 21,501.0 հազ. դրամ, որից պետրյուշե ենթակա է վերականգնման 11,608.0 հազ. դրամը:
- Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի վարձակալական պայմանագրերով սահմանված վարձավճարների մասով ձևավորված պարտքի մնացորդը կազմում է 1,158.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման:

Առաջարկություններ

ՀՀ Կառավարությանը

- Առաջարկվում է մարզպետարանների կողմից իրականացվող շինարարական ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի որակի ապահովման, ինչպես նաև ուղղակի պատասխանատվություն կրելու նպատակով, այսուհետ որպես այդ աշխատանքների պատվիրատու ճանաչել մարզպետարաններին:

Կոտայքի մարզպետին

- Միջոցներ ձեռնարկել վերահսկողությամբ արձանագրված խախտումները և բացթողումները վերացնելու, ՀՀ պետական բյուջեին հասցված վնասը վերականգնելու ուղղությամբ:
- Նախագծային առաջադրանքը կազմել մանրակրկիտ, սահմանված կարգին համապատասխան՝ պարտադիր նշելով օգտագործվող շինարարական նյութերի տեսակը, որակը, ծագումը և այլն:
- ՀՀ պետրյուշե վերականգնվող գումարները փոխանցել ՀՀ վերահսկիչ պալատի անվամբ բացված «Պետությանը պատճառված վնասների փոխհատուցումից մուտքեր» /900005281515/ հաշվին, ինչպես նաև Գանձապետական համակարգում բացված այլ եկամտային հաշվին՝ նշելով ՀՀ վերահսկիչ պալատի համար բացված 96 կոդը:

«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկատվություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցառումների մասին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԴՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

-----N-----

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն Ձեր 23.01.2013թ. թիվ 02/23.16/795-13 հանձնարարականի՝ ներկայացվում է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ Կոտայքի մարզպետարանում և մարզի քաղաքային համայնքներում իրականացված վերահսկողության արդյունքներով արձանագրված թերությունների և խախտումների վերականգնման վերաբերյալ տեղեկատվությունը: Վերահսկողության արդյունքներով քաղաքաշինության բնագավառում որպես ծավալային հավելագրումներ արձանագրված 4432 հազ.դրամ գումարը ամբողջությամբ փոխանցվել է ՀՀ պետական բյուջե, իսկ 18064 հազ.դրամ անորակ աշխատանքները ամբողջությամբ վերականգնվել են:

Վերականգնվել և ՀՀ պետական բյուջե է փոխանցվել նաև <Աբովյանի բժշկական կենտրոն>> և <Չարենցավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ների ստուգման արդյունքում արձանագրված վերականգնման ենթակա 1505.6 հազ.դրամ գումարը:

ՊՈԱԿ-ների վերահսկողության արդյունքում արձանագրված 793.6 հազ.դրամ գումարը ամբողջությամբ փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից խախտումներով լճարված և ՀՀ պետական բյուջե վերակարգնման ենթակա 11608 հազ.դրամ գումարից՝ 9701.5 հազ.դրամը մարվել է ՍՕՏԳ-ների կից գործող սոցիալական աջակցության խորհուրդների կողմից համաձայն ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N723-Ն որոշման 12-րդ կետի պահանջների, իսկ մնացած 2037.5 հազ.դրամ գումարը գանձվել և փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Հողի վարձակալական վարձավճարի բռնագանձման գործը գտնվում է ԴԱՀԿ ծառայության վարույթում, որն էլ պարտավոր է ապահովել գումարի բռնագանձումը համաձայն կազմված ժամանակացույցի: Ժամանակացույցի համաձայն բռնագանձումը պետք է իրականացվի 2012 - 2014թթ. ընթացքում:

Մարզի քաղաքային համայնքներում վերահսկողության արդյունքում արձանագրված էտ գանձման ենթակա գումարները ամբողջությամբ փոխանցվել են ՀՀ պետական բյուջե, իսկ համայնքային բյուջեներ գանձման ենթակա գումարները հավաքագրելու համար կազմվել են ժամանակացույցեր, որոնք սահմանված ժամկետում կգանձվեն և կմուտքագրվեն համապատասխան համայնքների գանձապետական հաշիվներին:

 ԳԱԼԴՅԱՆ

Կատարող՝ Լ. Նահապետյան
հեռ. /0223/ 2-53-01



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301 ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք. Հեռ/Ֆաքս (+374 223) 2 37 13 E-mail marzpetaran@Kotayk.region.am

05.04.2012թ. N 02/10/1121-12

Ձեր

ՀՀ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ի.ՋԱԲԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

Ի կատարումն ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 07.03.2012թ. թիվ 5/1 որոշման ՀՀ Կոտայքի մարզպետարանում քննարկվել է Կոտայքի մարզպետարանին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքները:

Վերահսկողության արդյունքներով քաղաքաշինության բնագավառում որպես ծավալային հավելագրումներ արձանագրված 4432 հազ.դրամ գումարից ՀՀ պետական բյուջե է վերադարձվել 2600.3 հազ.դրամ և 18064 հազ.դրամ անորակ աշխատանքներից վերականգնվել է 11688 հազ.դրամ: Մնացած ծավալային հավելագրումները /1751 հազ.դրամ/ և անորակ աշխատանքների վերականգնումը /6376.1 հազ.դրամ/ կավարտվի առաջիկա մեկ երկու ամսվա ընթացքում:

Վերականգնվել և ՀՀ պետական բյուջե է փոխանցվել նաև <Արովյանի բժշկական կենտրոն> և <Չարենցավանի բժշկական կենտրոն> ՓԲԸ-ների ստուգման արդյունքում արձանագրված վերականգնման ենթակա 1505.6 հազ.դրամ գումարը:

ՊՈԱԿ-ների վերահսկողության արդյունքում արձանագրված 793.6 հազ.դրամ գումարը ամբողջությամբ փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից խախտումներով վճարված և ՀՀ պետական բյուջե վերակարգնման ենթակա 11608 հազ.դրամ գումարից՝ 9701.5 հազ.դրամը մարվել է ՄԾՏԳ-ների կից գործող սոցիալական աջակցության խորհուրդների կողմից համաձայն ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N723-Ն որոշման 12-րդ կետի պահանջների,

837.5 հազ.դրամ գումարը գանձվել և փոխանցվել է ՀՀ պետական բյուջե, իսկ մնացած 1699 հազ.դրամը՝ կգանձվի համաձայն ժամանակացույցի, մինչև տարեվերջ:

Հողի վարձակալական վարձավճարի բռնագանձման գործը գտնվում է ԴԱՀԿ ծառայության վարույթում, որն էլ պարտավոր է ապահովել գումարի բռնագանձումը:

Առդիր՝ 51 թերթ:



Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Կատարող՝ Լ. Նահապետյան
հեռ. /0223/ 2-53-01